



# ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Սեպտեմբերի 27-ին ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ տեղի է ունեցել առաջին կուրսեցիների ավանդույթ դարձած երդման արարողությունը:**

Արարողությանը ներկա էին ԼՂՀ ԱԺ փոխխոսնակ Վահրամ Բալայանը, ԿԳՍ նախարար Սլավիկ Արյանը, փոխնախարար Արմեն Սարգսյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, համալսարանականներ:

Անխախտ պահելով ավանդույթը՝ հյուրերն ու համալսարանականները ԱրՊՀ օրհներգի հնչյունների ներքո նախ ծաղիկներ խոնարհեցին հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհած ուսանող-ազատամարտիկների հուշակոթողին, որի տարածքում երդման արարողություն կազմակերպվել է ոչ միայն պարտավորեցնող է, այլև խորհրդանշական:

Մայր բուհի ամենասպասված և ամենասիրված միջոցառման պաշտոնական մասը սկսվեց երդմամբ: Էլինա Գասպարյանը առաջին կուրսեցիների անունից երդվեց «վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ գաղափարներին, պատվով ու պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, սիրել և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման ու բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»:

Առաջին կուրսեցիների շնորհավորելու եկած ԼՂՀ ԱԺ փոխխոսնակ Վ. Բալայանը երդման արարողությունը համարեց անելիքները հերթական անգամ ճշտելու և առաջընթացի տեսլականն ուղեմղելու լավագույն միջոցառումներից մեկը: Նա շեշտեց բազմակողմանի զարգացած քաղաքացու և մտավոր հարուստ ներուժով մասնագետի պահանջարկը մեր հանրապետությունում հորդորելով ուսումնառության տարիներին ամբարել այնպիսի գիտելիքներ, որոնք կառաջնորդեն նրանց ապագայում:

ԼՂՀ ԿԳՍ նախարար Ս. Արյանի՝ ուսանողներին ուղղ-



ված մաղթանքը ժամանակակից պահանջներին համատարած ուսանող դառնալն ու այդ ճանապարհին տրված երդմանը հավատարիմ մնալն էր: «Գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին ազնիվ և պահանջկոտ եղբ ինքներդ ձեր հանդեպ՝ գիտակցելով, որ այն, ինչ կստանաք այսօր, պիտի ծառայեցնեք մեր երկրին ու պետականությանը», - հավելել է նախարարը:

Բուհի ղեկավարի խոսքով՝ սա երդում է ոչ միայն լավ ուսանող դառնալու, այլև առաջին հերթին երկրի արժանի քաղաքացի դառնալու, 75 նահատակ ուսանողների արժանի հետնորդը լինելու: Մ. Մինասյանը մաղթեց բոլորին ապրել և ստեղծագործել խաղաղ պայմաններում, ճանաչված և ժողովրդավարական հիմունքներով զարգացող հանրապետությունում:

Միջոցառումը եզրափակվել է ՀՀ և ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձերին նվիրված պար-բեմադրությամբ:

Հավելենք, որ ընդունելության քննությունների արդյունքներով ամենաբարձր միավորներ վաստակած առաջին կուրսեցիները պատիվ ունեցան ուսանողական գրքույկներ ստանալու ԱրՊՀ ռեկտորից և բարձրատիճան հյուրերից:

# ԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

**Արդեն մի քանի տարի է, ինչ ուսումնական տարվա սկզբին ԱրՊՀ ղեկավարությունը հանդիպում է նախաձեռնում բուհի առաջին կուրսեցիների հետ: 2016-2017 ուսումնական տարին բացառություն չէր: Սեպտեմբերի 21-ին բուհի մեծ դահլիճում առաջին անգամ համալսարան ուղբ դրած ուսանողների հետ հանդիպում են ունեցել ռեկտոր Մանուշ Մինասյանն ու պրոռեկտորներ Գեորգի Սահակյանը և Վիտյա Յարամիչյանը:**

Ռեկտոր Մ. Մինասյանը, ողջունելով ուսանողներին, շնորհավորել է անկախության տոների, Արցախի մայր բուհի ընդունվելու կապակցությամբ, մաղթել արժանապատվորեն կրել անկախության սերնդի և ԱրՊՀ ուսանողի պատվավոր կոչումները:

Բուհի ղեկավարը հանդիպման սկզբում համառոտ ներկայացրել է Արցախի պետական համալսարանի անցած ուղին, ձեռքբերումներն ու մարտահրավերները, կառուցվածքը, ապա կանոնակարգային, առանցքային այնպիսի դրույթներ, ինչպիսիք են ԱրՊՀ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները, կրթաթոշակի տրամադրման, ուսման և այլ վճարների գանձման, փոխառուցման գործընթացի կազմակերպման, գիտելիքների համակարգային - թեստային ստուգման և այլ կարգեր:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը խոսել է Արցախի պետական համալսարանում կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսումնական



գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման կարգերի, առաջարկվող ուսումնական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, այդ ծրագրերի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների, ինչպես նաև գնահատման ձևերի և չափանիշների մասին:

Անդրադառնալով ԱրՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների հիմնական ուղղություններին ու առաջնահերթություններին՝ ՈւՇՀՀՍԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիչյանը առաջարկել է օգտվել ընձեռնված հնարավորություններից և անմիջական մասնակցություն ունենալ բուհի ներքին և արտաքին կյանքին:

# ՏԱՐԲԵՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ՝ ՀԱՆՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԻ

**2015 թ. դեկտեմբերի 28-ի կառավարության միտումնաքաղ ղեկավարող համալսարան հիմնադրելու մասին: Նույն միտումնաքաղ կառավարող գործող պետական և մասնավոր բուհերի ընդունելության քննությունների ցանկը, որից հետևում էր, որ Արցախի պետական համալսարանը 2016-2017 ուսումնական տարում տեխնիկական ուղղվածության մի շարք մասնագիտությունների գծով ընդունելություն չի կազմակերպելու:**

Օգոստոսին Արցախի պետական համալսարանի և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորների գլխավորած հանձնաժողովները սկսել են հանձնման - ընդունման աշխատանքները: Այս կապակցությամբ երկու բուհերի ռեկտորները համատեղ հանդիպում են ունեցել ԱրՊՀ-ից ՀՏՀ տեղափոխվող պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանակ անձնակազմի հետ, քննարկել երկուստեք հուզող հարցեր:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանակ կազմին ԱրՊՀ-ում ծավալած գործունեության համար, բարձր գնահատել նրանց ավանդը մայր բուհի կայացման և զար-

գացման գործում, հույս հայտնել, որ ՀՏՀ ժամանակակից պայմանները առավել լայն հնարավորություններ կընձեռեն նրանց հետագա գործունեության համար:

ՀՏՀ ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանն իր հերթին լիաժույս էր, որ ԱրՊՀ

գիտուժը նպաստելու է նորաստեղծ համալսարանի կայացմանն ու զարգացմանը՝ այդպիսով իր ներդրումն ունենալով Արցախում տեխնիկական գիտությունների զարգացման գործում:

«Արցախի պետական համալսարանը, լինելով հանրապետության մայր բուհ, լուծում է նախևառաջ համամարդկային նշանակության խնդիրներ, այնպիսի Շուշիի տեխնոլոգիական համալսարանը իր առջև խնդիր է դրել կարճ ժամանակահատվածում լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են երկրի պաշտպանությունն ու տեխնիկական հագեցվածությունը: Ուստի մենք պետք է ոչ թե մրցակիցներ, այլ հա-



մախտներ լինենք՝ ի նպաստ Արցախի Հանրապետության բարգավաճման», - նշել է Հովհ. Թոքմաջյանը:

Նշենք, որ Արցախի պետական համալսարանից Շուշիի տեխնոլոգիական համալսարան է տեղափոխվել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի մասնագիտական խմբերի 209 ուսանող:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանին անհատույց օգտագործման իրավունքով կտրամադրվի նաև նյութատեխնիկական բազա հանդիսացող համապատասխան գույքը:

# «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ 25-ԱՄՅԱ ԾԱՆԱԳԱՐՅԻՆ»

**Գիտելիքի և դպրության օրը ԱրՊՀ գիտական գրադարանի կողմից բացվել էր ցուցահանդես՝ նվիրված ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձին:**

«Անկախության կերտման 25-ամյա ճանապարհին» խորագիրը կրող ցուցահանդեսում ներկայացված էին ԱրՊՀ գիտական գրադարանում առկա գրքերը, որոնք հրատարակվել են ԼՂՀ-ում վերջին 25 տարիներին: Ցուցադրության ներկայացված նմուշների գերակշիռ մասը հունանիտար ուղղվածությամբ էին, որոնց մեջ առանձնանում էին ԼՂՀ պատմությանն ու տարեգրությանը նվիրված աշխատությունները: Գրադարանի տնօրեն Լաուրա Առստամյանը ցուցահանդեսի կարևորության մասին խոսելիս նշում է, որ այն, հաշվետվություն լինելուց բացի, նաև հնարավորություն է տալիս ծանոթանալու գրադարանի պաշարներին, առկա միավորներին, հնարավորություններին:

Լ. Առստամյանը ցավով է նշում, որ ցուցահանդեսում ներկայացված գրքերը վերջին 25 տարիների ընթացքում լույս տեսած գրքերի ամբողջական պատկերը չեն, ինչը իր օբյեկտիվ պատճառներն ունի. «Առայժմ մեզ չի հաջողվում պարտադիր օրինակի իրավունք ունենալ, ինչը նշանակում է, որ հանրապետությունում հրատարակված գիտական բոլոր աշխատություններից մեկական օրինակ պարտադիր պետք է ունենա համալսարանի գրադարանը՝ հաշվի առնելով նրա ուղղվածությունը»:





